

վերջացել է այդ սովորութիւնը, բացառութիւն է կազմում Զիւանու «այծեամ» ի դէմ դրած պատասխանը.

—Անհոգ ես, չես գիտեր, ինչ կայ քո մասին՝

Պատոււմ են քո խեղճ անձիդ վնասին...

—Անհոգ չեմ, լաւ գիտեմ, ինչ կայ ինձ համար.

Որսկանն անտառում շրջում է անդադար...

Շիրինի ժամանակ այդ տեսակ բանակուսական երգերից ամենքից աւելի մեծ ազմուկ հանեց «Արլար»ի երգը: Ով ծանօթ է այդ շրջանի հայ աշուղական երգերին, ով թիրթիլ է Քնար հայկականը, Ոսկանի «Քնար»ները. նա անշուշտ տեսած կը լինի այդ երգը իւր պատասխաններով:

Գրաւոր մրցումներին ու հարց պատասխանին է վերաբերում աշուղների մէջ եղած երգով նամակագրութեան սովորութիւնը: Մէկը մի ոտանաւոր-նամակ է գրում հարցերով, միւսը նոյն ձևով ու յանգով պատասխանում է: Մինչև անգամ սովորական բարեհագիր նամակներն էլ աշուղները շատ անգամ միմեանց գրում են երգով, հենց կարծես այդ նրանից է որ նրանք ոտանաւոր աւելի ազատ են գրում քան արձակ: Օրինակ Զիւանու. նախկին ընկեր Սաղային երկար ժամանակ նրանից նամակ չուներաւով գրում է—

Տաւր տարին լրացաւ, չունիմ մէկ նամակ, ով Զիւան,

Եթէ ճոխաբան չը կար, գոնէ հասարակ, ով Զիւան.

Մէկ նայեա պանդխտներին ինչն է նրանց միեթարիչ

Բացի նամակ ինչ ունին սիրոյ յիշատակ, ով Զիւան...

Եւ այսպիսի ձևով շարունակում է ամբողջ նամակը:

Գ. ՍՅՈՒՂԱԿԱՆ ԳԱՐՏՆԻ ԼԵՁՈՒՆ

§ 30. Ընդհանրական տեղեկութիւններ: Աշուղական գողտնի լեզու, կամ ինչպէս իրենք, աշուղներն են տաւր «թարս լեզուն» հնարուել է այն նպատակով որ հասարակութեան մէջ, կամ մի օտար մարդու ներկայութեամբ, եթէ նրանք ոչ ունենան մի արեւ գաղանի բան խօսելու՝ խօսեն: Ո՞վ է հնարել այս լեզուն, մրտեղ, որ թուականին, յայտնի չէ. միայն աշուղներն ասում են որ Շիրինի ժամանակները շատ զործածական է եղել ու նա է բերել Ալէքսանդրապոլի և Ղարսի կողմերը՝ որ և տարածուել է Անդրկովկասեան բոլոր քաղաքները: Ի՞նչ բան է այդ նոյն հայերէն խօսակցական լեզուն է, կերպարանափոխուած, դարձուած այսպէս—

ա. որ, սէր, չուր, շուն բառերը գտնուում են բո, բէս, բուշ, նուշ.
լոյս, մարդ, սայլ, ձեռք—գտնուում են—սոյլ, թարմ,
լայս, քեռծ.

բ. սիրուն, ճակատ, սոխակ—բխուն, կանառ, խոտակ.
խանութ, կորօռ, կերատ—նուխտ, բոկատ, ռակէս.
հոգի, գինի, աղա—գինո, նիգի, զայա.

ժլատ, շապիկ, գօտի,—ալատ, կապիշ, աիգօ,

գ. սիրական, մանուշակ, վարդապետ—կիրասան, շանու-
մակ, պարավետ.

դ. միթիթարանք, ինամութիւն, ճանապարհորդ—խմիթա-
րանք, նմախութիւն, ճապարհանորդ:

Այս օրինակներից լինել ենք տեսնում—

ա. Միավանկ բառերը, որոնք կազմուած են միայն 2 կամ 3 տառից, գտնուում են բոլորովին հակառակ—էշ—շէ, հաց—ցահ, ծառ—աած, իսկ որոնք 4 կամ ավել տառից՝ առաջին տառը գնում է վերջը, վերջինը զայիս է տուջ. ծոյլ—լոյծ, սիրտ—տիրտ, փայլ—լայփ:

բ. Երկվանկ բառերը կազմուում են, ինչպէս տեսնում ենք, 1) Միայն առաջին վանկը փոխուելով, որ վերջաւորութիւնը մնում է նոյնը: 2) Երկրորդ վանկի առաջին երկու տառը զայիս են բառի սկիզբը: 3) Զայնաւոր տառով վերջացող բառերի վանկերը յետ ա. առաջ են գրուում ամբողջապէս: Բացառութիւն են կազմում մի քանի բառեր՝ որ կազմում են միավանկ-չորս տառ բառերի նման, այսինքն փոփոխում են իրենց տեղերը առաջին և վերջին տառերը:

գ. Երեքվանկեան բառերում ա տառը փոխուում է երրորդ վանկի ա տառի հետ, իսկ եթէ բառը ձայնաւոր տառով է վերջանում՝ կարգացուում է վանկ վանկ ընդհակառակը. սի բն լի—լի-բն սի. մարգարէ—բէ պար մա. բացառութիւն են կազմում մի քանի բառեր, որոնց միջին վանկը զայիս է սկիզբը՝ նազանի—զանանի:

դ. Չորսվանկեան կամ բազմավանկ բառերում փոխում են միմեանց հետ առաջին և երկրորդ վանկերը: Բազմավանկ յատուկ տնտեսները որպէս զի հասկանալի լինին՝ սկզբի և վերջի վանկերը մնում են անփոփոխ, միջին վանկերը փոխուում: Մասիս—Սիմաս, Զիւանի—Վիզանի՝ բայց Վասպուրական—Վարուդական, Ատրպա-տական—Ատրկատապած:

Ընդհանուր կանոն է, 1) երբ բառերը կազմուելիս երկու ձայնաւոր տառ միմեանց մօտ են զայիս՝ բարենշնչուութեան հա-մար իրենց մէջտեղ ընդունում են այ՝ տառը. աղա—զայա. 2) Երբ

հոմանիշ կոչող տառերը բառի միջից կամ վերջից առաջ են գալիս, ընդունում են փափուկը, մարդ—թարմ¹⁾ և ոչ դարմ:

Ինչ ձևով որ կազմում է գոյականը, նոյնն է և ածականը և թուականը չար—բաշ, բարի—բիրա, համեստ—մեհաստ, տասը—ասոր, հազար—բահազ, երեսուն և վեց—եսեռուն և վեց:

Դերանուններից մի քանիսը, նախդիրները և օժանդակ բայերը մեռած են անփոփոխ:

Աայերը փոխում են միայն արմատներով գոյականի կանոնով զնալ—նգալ, խմել—մխել, բարկանալ—կարբանալ, ուտել—տուլել:

Մի ամփոփ գաղափար տալու համար ահա մի քանի սոսո ստանաւոր և արձակ—

Շիգեր, բեցեկ մոքրոմում եմ չի՞ն նիամ

Իակօտդ շաքում եմ բատով, զանանի.

Գի՛նհաստ նուշիմ անբազաստ իմ զեք բահամ

Վացերև ցեթեթուր բխով զանանի.

Քալալ—Ղօլին միեց ըէյազումը սաթ

Յախրանաս դու զեմի նայուց բարև տաս

Իէյանի ալն բոյուն բով բեմ նուտը սազ

Տազում լզխովդ բարով զանանի...

Ղուլազական շարքի գելունն կերնայումս չիք ձործածական է. նմացել է լզխաւորապէս, թիկաշի և Յարխայի զոկմերում, և մակաց մակաց բնանում է ցոխացկութեան զեմից: Մենք տաշ զանյամ սլել ենք թէ չի՞ն պէս վիջանին. մաջալին և բույիշ դույաշներ սոխում են բիրա հետ պէյն աս բայագ, որ փարկես դույիշ սոխելիս նիլենն¹⁾

¹⁾ Եթիշեր ցերեկ մորմորում եմ ի՞նչ անեմ,

Կարօտդ քաշում եմ տարով, նազանի,

Հանդիստ չունիմ անդադար եմ քեզ համար,

Յաւերս թեթեցուր սիրով, նազանի.

Քալալ—օղլին իմեց երազումը թաս,

Բազցրանաս դու, մեզի անուշ բարև տաս,

Երանի ալն օրուն որ մեր տունը զաս,

Պատուի զլխովդ բարով, նազանի...

Անշուղական թբարդ լիզունն ներկայումս քիչ գործածական է. մնացել է զլխաւորապէս Շիրակի և Արցախի կողմերում և կամաց—կամաց վերանում է խօսակցութեան միջից: Մենք շատ անգամ լսել ենք թէ ինչպէս Զիւանին, Զամալին և ուրիշ աշուղներ խօսում են իրար հետ այնպէս արագ, որ կարծես ուղիղ խօսելիս լինին: